

Ա. Մ. Ա. Վ. Ե. Բ. Զ. Ի. Լ. Ն. Դ. Ի. Ս. Ո. Ի. Թ. Ի. Ե. Ն. Գ.
Ս. Թ. Ա. Բ. Մ. Ա. Ն. Զ. Ա. Յ. Ե. Ի. Կ. Բ. Վ. Ա. Բ. Ժ. Ա. Ն. Ի.

Այս տարի, Ս. Թարգմանչաց վարժարանի զոյգ Հանդէսներն ալ — Մանկապարտէզի և Երկրորդական բուժնի — կատարուեցան ժառանգ. վարժարանի և Ընծայարանի Մանուկեան ընդարձակ սրահին մէջ:

Առաջինը տեղի ունեցաւ 2 Յունիս, Կիրակի կէսօրէ ետք ժամը 4ին և տեւեց մօտ երկու ժամեր: Հանդէսին այս տարի իրենց մասնակցութիւնը բերին նաև Նախակրթարանի զանազան կարգերէն աշակերտներ, կատարելով նաև Անդլերէն լեզուով արտասանութիւններ: — Բացման հսկիւրը խօսք մը ըրաւ Ա. դասարանի դասախարակ-ուսուցչուհի Օր. Արփի Գահուէճեան: Մանկապարտէզի երեք դասարաններու — Ծիւ, Կոկոն, Ծաղիկ — փոքրիկները կարելի յաջողութեամբ ըրին արտասանութիւններ, հայկական պարեր և արտախօսութիւններ: Աւելի յաջող էին անշուշտ Նախակրթարանի սաներուն կողմէ կատարուած խմբերգներն ու քննադրուած տրամախօսութիւնը, ըսլորն ալ Անդլերէն լեզուով, որոնք հոծ հանդիսականներէն խլեցին որոտընդոտ ծափահարութիւններ:

Հանդէսին Նախագահ և վարժարանի բարեջան Տեսուչ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարեկեան իր փակման խօսքին մէջ գովաբանով արտայայտուեցաւ Մանկապարտէզի վարժուչինեբու իննամօտայ անխոնջ ու նուիրեալ աշխատանքի մասին և ընթացաւարտ 11 երկուսու փոքրիկներուն ըստինց աւարտական վկայականներ:

Յաջորդ Կիրակի, 9 Յունիս, երկուշաբթի ժամը 6.30ին կայացաւ Երկրորդական բուժնի Ամսվերջի Հանդէսը, որ այս տարի նուիրուած էր Գլաւորի Համալսարանի Կրթնագրութեան 700ամեակին: Ներկայ էր Միաբանութիւնը, գլխաւորութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. Ի, ծնողներ և հրաւիրեալներ:

Հանդէսը սկսաւ Թարգմանչաց շարական ճմաննալ Մովսիսի քի երգեցողութեամբ: Բացման խօսքէն ետք, ընթացաւարտ դասարանի սաներ խօսեցան Միջնադարեան Հայ Դպրութեան պանծալի օճախներէն Գլաւորի Համալսարանին մասին, զարեան Հայ Դպրութեան արտաքին ժամանակակից համալսարաններուն հետ: Մէջ ընդ որ պարտուով կը մրցի Եւրոպայի ժամանակակից համալսարաններուն հետ: Մէջ ընդ մէջ եղան խմբերգներ՝ կատարուած վարժարանի ուսանողներէն կազմուած երգչախումբէ մը, զոր կը ղեկավարէր Պր. Սահակ Գալայճեան, բաղամանայ Դպրապետը Ս. Աթուռոյ: Եղաւ նաև խմբական արտասանութիւն:

Հանդէսին երկրորդ մասը սկսաւ Տեսչին կողմէ կատարուած վարժարանի Տարեկան Տեղեկագրի (որ տպուած է կոնիսիդ էջերուն վրայ) ընթերցումով, որմէ ետք Նախագահ Սրբազանը կատարեց բաշխումը վկայականներու և մրցանակներու: Այս տարի վարժարանի հոնձքն էր 6 սան — 2 մանչ և 4 աղջիկ: Հրաժեշտի սովորական երգէն և նոյնիմաստ ուղերձէն ետք, Լուսարարապետ Սրբազան Հայրը ըրաւ փակման խօսքը, յորդորելով ընթացաւարտները որ հաւատարիմ մնան Թարգմանչացով իրենց խօսքը, յորդորելով ընթացաւարտները որ հաւատարիմ մնան Թարգմանչացով իրենց խօսքը:

Հանդէսը վերջ գտաւ միաբերան երգումով Տէրունական Աղօթքով: